# «Ջրի և առողջության մասին» արձանագրության ներքո թիրախների վերանայում

Էմմա Անախասյան

Երևան

19 հոկտեմբերի 2018թ.

# «Ջրի և առողջության մասին» արձանագրությունը




- Աշխարհի առաջին իրավական պայմանագիրն է, որը նպատակ ունի ջրային ռեսուրսների կառավարման բարելավման միջոցով նվազեցնել ջրի հետ կապված հիվանդացության և մահացության դեպքերը:
- Արձանագրության կողմ են հանդիսանում 26 երկիր, որոշ երկրներ՝ կողմ դառնալու ճանապարհին են:
- Գործում է համատեղ քարտուղարություն՝ ՄԱԿ-ի ԵՏՀ-ն և ԱՀԿ-ի եվրոպական գրասենյակը:

# Նպատակների սահմանում և առաջընթացի գնահատում

**ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԹԻՐԱԽՆԵՐԸ**

- Ջրամատակարարում և ջրահեռացում
- Ջրային ռեսուրսների կառավարում
- Առողջության պահպանում

**ՍԱՀՄԱՆԵԼ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Կողմ դառնալուց հետո 2 տարվա ընթացքում յուրաքանչյուր երկիր սահմանում և հրապարակում է թիրախները և դրանց հասնելու ժամկետները:

**ՎԵՐԱՆԱՅԵԼ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ**

Կողմերը՝

- հավաքագրում և գնահատում են տվյալները,
- հրապարակում են արդյունքները,
- վերանայում են առաջընթացը,
- տրամադրում են ամփոփ հաշվետվություններ:

**ԳՆԱՀԱՏԵԼ**

Կողմերի հանդիպումը գնահատում է իրականացման առաջընթացը:

Աղբյուրը՝ ՄԱԿ –ի ԵՏՀ-ի զեկույցներ

# «Ջրի և առողջության մասին» արձանագրությունը. Հայաստան

- Հայաստանն արձանագրությունը ստորագրել է 1999թ.-ին, բայց դեռ չի վավերացրել:

- Չնայած Հայաստանը արձանագրության Կողմ չէ, սակայն իրականացնում է ծրագրեր՝ ուղղված արձանագրության ներդրմանը և իրականացմանը:

# Հայաստանում արձանագրության ներքո թիրախների սահմանումը, 2012-2014թթ.

Նպատակն էր.

- Օժանդակել կառավարությանն ազգային և/կամ տեղական նպատակային ցուցանիշների սահմանման գործընթացում,
- նպաստել Հայաստանի կողմից «Ջրի և առողջության մասին» արձանագրության վավերացմանը:

Նախնական թիրախներն սահմանվեցին և ընդունվեցին ԵՄՋՆ ԱՔԵ ղեկավար հանձնախմբի 2014թ.-ի մայիսին կայացած նիստի ժամանակ:

Արձանագրությունը դեռ չի վավերացվել Հայաստանի կողմից:

# Հայաստանում արձանագրության ներքո թիրախների սահմանումը, 2018թ.

ԵՄՋՆ+ ծրագրի շրջանակում, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի և ՄԱԶԾ-ի աջակցությամբ, 2017թ.-ի դեկտեմբերի 5-ին Երևանում «Ջրի և առողջության մասին» արձանագրության և ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության վերաբերյալ կազմակերպված խորհրդակցության ժամանակ կայացվեց որոշում՝ վերանայել արձանագրության ներքո սահմանված ազգային թիրախները:

# Հայաստանում արձանագրության ներքո թիրախների սահմանումը, 2018թթ.

Ծրագրի նպատակն է.

- նպաստել արձանագրության ներքո սահմանված ազգային թիրախների վերանայմանը,
- նպաստել ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության գործողությունների պլանի առաջին միջոցառման իրականացմանը,
- նպաստել Հայաստանի կողմից «Ջրի և առողջության մասին» արձանագրության վավերացմանը:

# Ծրագրի հիմնական գործընկերները.

- ՀՀ բնապահպանության նախարարությունը,
- ՀՀ առողջապահության նախարարությունը,
- ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը,
- <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> ՀԿ-ն
- Ֆինանսավորումը՝ ՄԱԿ-ի ԵՏՀ, Եվրամիության Ջրային նախաձեռնություն պլյուս ծրագրի շրջանակում։

# Ծրագրի կառավարումը

- Ջրային ազգային քաղաքականության երկխոսության Ղեկավար հանձնախումբը
- ազգային փորձագետների աշխատանքային խումբը
- ՄԱԿ-ի ԵՏՀ քարտուղարությունը
- ՀԿՀԱԱԾՄ ՀԿ-ն:

# Ծրագրի ժամանակացույցը

- Ծրագիրը սկսվել է 2018թ. ապրիլին:
- Ջրի և առողջապահական իրավիճակի բազային վերլուծության ներկայացում ԱՔԾ ղեկավար հանձնախմբին - 2018թ. մայիսի:
- Թիրախային ոլորտների առաջնահերթության քննարկում շահագրգիռ կողմերի հանդիպման ժամանակ- 2018թ. սեպտեմբեր:
- Թիրախների սահմանում և ծրագրի ավարտ - 2018թ. նոյեմբեր:

# Ծրագրի իրականացումը

- Աշխատանքային խմբի ստեղծում և հանդիպումներ աշխատանքների քննարկումների նպատակով:
- Ջրի և առողջապահական իրավիճակի բազային վերլուծություն պատրաստում– տեխնիկական հաշվետվություն արձանագրության 20 ոլորտների համար
- Տեխնիկական հաշվետվությունը ուղարկվել է Ջրային կոմիտեին և Ջրային ռեսուրսների կառավարման գործակալությանը մեկնաբանությունների համար:

# Ելակետային իրավիճակի վերլուծություն

Մեթոդաբանությունը հիմնված է եղել «Նպատակային ցուցանիշների սահմանման, ընթացքի գնահատման և հաշվետվությունների կազմման ուղեցույցի» վրա:

Վերլուծությունը ներառում է հետևյալ տեղեկատվությունը.

- Ռազմավարություններ, իրավական / կարգավորիչ դաշտ և միջազգային պարտավորություններ,
- Ինստիտուցիոնալ շրջանակները,
- Ֆինանսական շրջանակները,
- Ոլորտին վերաբերող հիմնական խնդիրները, դրանց լուծման համար համապատասխան ընթացիկ և նախատեսվող գործունեությունը,
- Փորձագիտական գնահատականը:

# Ըլակետային իրավիճակի վերլուծություն

- Ջրամատակարարում և ջրահեռացում
- Ջրային ռեսուրսների կառավարում
- Առողջության պահպանում

# Ծրագրի իրականացման հետագա քայլերը

- Շահագրգիռ կողմերի հանդիպում,
- Թիրախային ոլորտների ընտրություն
- Նախնական թիրախների և նպատակային ժամկետների սահմանում
- Սահմանված թիրախների և նպատակային ժամկետների, միջոցառումների ծրագրի և ցուցանիշների համաձայնեցում և հաստատում:

Շնորհակալություն: